

ՔԱՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՄԻՆ

Պուշկարի»	հավար
Տարեկան	12 Ձր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
հավար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Անտիկայի	հավար
Տարեկան	3 զր.
Վեցամսեայ	1.50 »

Ծանուցանել տողը սուս քին երեսին հավար 40 ս իսկ վերջին երեսի հավար 20 ս սակարի Կ. Երեբեկի անգլիականներու հավար 20 0/0 գեղջ կրլ շայ:

Վառույթի հավար ձևով 10 սակարի

ՉԱՐՄՈՒՄ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՈՐԱՎՈՒՄ ԶՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ԵՐԱՅԻ ՕՐԵՐԸ

Նախկին և նոր զրկի և արտոնական հաս- ջեին .

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտասահմանի հավար ձևով (20 ՍԱՆԹԻՄ) Պուշկարի» հավար ձևով (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք Ես չեմ տրուի

«ՇՆՐԵՔԵԱԹԻ»-Ի ՔԱՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՄԻՆ ԲԱՏՆԵԳԻՆԸ ՊԵՏՐ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԱԶԴ

Մեր բոլոր այն բաժանորդները, որոնք վեա չեն վճարած իրենց բաժնեկիսները, թող հաճին անյապաղ մեզ հասցնել զանոնք, կը յիշեցնենք իրենց թէ մեր բոլոր ծախքերը կանխիկ ըլլալով չենք կրնար թերթը ապառիկ ծախել:

Ս Իրագր.

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՐՈՇՈՒՄ ԱՇ

Ամենուս ալ յայտնի է որ մեր կրօնական ու եկեղեցական կարգ ու սարքերուն մէջ կան սովորութիւններ, գրեթէ օրէնքի ձև առած, որոնք հակառակ են թէ՛ մեր եկեղեցիին ոգւոյն և թէ՛ նոյն իսկ քրիստոնէական վարդապետութեան նպատակին:

Այս կարգի սովորութիւններէն մէկն է մեր եկեղեցական պաշտօնները վարձատրելու այն կերպը, ժամերգութեան միջոցին իսկ հաւատացեալներէն գրեթէ հաւաքելու այն ձևը, որ հակառակ բոլոր իր ազգայութեան գեռ կը տիրէ մեր մէջ:

Ժողովուրդը, որ եկեղեցի կուգայ աղօթելու, պահ մը երկնային երգերու քաղցրութեան մէջ մտնելու աշխարհը և անոր վիշտերը, դէմ դիմաց կը գտնէ ինքզինքը նորէն նիւթական գաճաճ առուտորի մը հետ: Պնակուորները հարկահաններու պէս կը շրջին՝ դրամի ձայնը հանելով դիտմամբ, որպէս զի աղօթքի քունէզ արթննաւ և «տասնոցը» ցնծաւ: Ու գուն կատարուիս նստածոյ հետ խօսիլը մէկ կողմ գնելով՝ գրպանիդ մէջ մանր դրամ մը փնտռել և եթէ չունիս ֆրանք մը աւրել տալ—կատար եւլ չարչիական առուտոր մը ընել հոն նստածոյ տան մէջ, որովհետեւ պնակին մէջ խոշոր կեկ դրամ մը ձգելը գործիդ չգար, պնակ պտտողները մէկ չեն, երկուք չեն:

Պոլսոյ «Մանգուսէի Էֆրեայ» թերթին մէջ կը կարդանք թէ՛ Մաքրի Գիւղի թաղական խորհուրդը թաղեցիներուն հաւանութեամբ որոշած է պնակներու շրջագայութիւնը վերցնել եկեղեցիին մէջէն ու անոր փոխարէն տարեկան որոշ գումար մը ստանալ իւրաքանչիւր թաղեցիէ:

Ահաւասիկ որոշումը, որ պատիւ կը բերէ ոչ միայն Մաքրի Գիւղի թաղական խորհուրդին, այլ նաեւ իսկ հայկական եկեղեցիին՝ Մենք արտասահմանի մէջ գտնուող բոլոր հայ եկեղեցիներու թաղական խորհուրդներուն ու շաղրութիւնը կը հրաւիրենք այս օգտակար և միանգամայն պատուաբեր որոշումին վրայ:

Հոս, արտասահմանի մեր եկեղեցիներուն մէջ, ինչպէս ըսինք, այս պնակներու շրջագայութիւնը երբեմն այնքան անհաճոյ է որ մարդ կամ շնայ պարզապէս հոն գտնուելուն համար Պնակ պտտողները իրարու ետեւէ կը տնկուին առջեւ, եկեղեցւոյն քահանան որ իր անձը միմիայն ապօթքի պիտի նուիրէր, յիշելիքը ձեռքը կը մտնէ ժողովուրդին մէջ՝ իր ապրուստին համար գրեթէ ժողովուրդ և եկեղեցին, երգի և աղօթքի այն սրբափայլը, կարծես թէ խանութի կը փոխուի պահ մը:

Նոյն քան նպատակաւորաբար որ քրիստոնէական է հիմա Մաքրի Գիւղի Պատուարժան թաղական խորհուրդին կարգադրութիւնը: Այլ եւս անոնց ազօթարանը պիտի գործածուի միմիայն աղօթելու համար և հոն չպիտի խանուի դրամին ձայնը աղօթքի ձայնին հետ:

Անցեալ օրեր յարգելի «Եկեղեցասէր» մը՝ «Շարժում» մէջ իր հրատարակած մէկ նամակով կարգ մը ուրիշ եկեղեցական անկարգութիւններու հետ կը մատնաշէր նաեւ պնակի շրջագայութեան մէկ շատ տղեղ դէպք և անկարելի էր շտեմել սրտի ճշմարիտ կսկիծ մը, անկեղծ վիշտ մը՝ յարգելի «Եկեղեցասէր»:

«Ին խօսքերուն մէջ»
Իրաւ է որ քահանայ մը ազգին մէկ պաշտօնեան է և իր ծառայութեան փոխարէն ազգը պարտաւոր է ապրեցնել զինք, բայց ինչպէ՞ անպատճառ ստիպուած ըլլալ ան՝ իր պաշտօնէութեան վարձքը հաւաքել «տասնական» փարայոյ և ճիշդ այն պահուն՝ ուր ժողովուրդ թէ քահանայ բոլորովին մուցած պէտք էր որ ըլլային ամեն անձնական շահ, հեռի պէտք էր որ ըլլային նիւթական ամէն ստոր հաշիւներէ. ինչպէ՞, կըսենք, ստիպուած ըլլալ քահանան Ձատկին, Մնուկին և ունայտթութիւններուն ճիշդ իր ժողովուրդին տուէրը օրհնելու և հոգեւորապէս մխիթարելու ասան՝ իր փին մէջ ընդունիլ ֆրանք մը կարծես գաղտագողի՝ գրեթէ ողորմութիւն տալու ձեւով մը պարզապէս: Անկարելի է ուրանալ որ թէ քահանային և թէ ժողովուրդին անպատուաբեր ձեւ մըն է ասիկայ:

Այս մէկ քանի խօսքը ըսելէն ետքը կրկին ուշադրութիւնը կը հրաւիրենք մեր թաղական խորհուրդներուն՝ Պոլսոյ մէկ թաղին մէջ տրուած վերոյիշեալ պատուաբեր որոշումին վրայ:

Ազգային պաշտօնեայ մը վարձատրելու ամենէն օրինակական ձեւը անոր ապրուստը ապահովելու թողալ մը յատկացնել է իրեն և ժողովուրդն ալ իր հոգեւոր պաշտօնէին կողմէն իրեն եղած ծառայութեան փոխարէն պարտաւոր է ամսական կամ տարեկան տուրք մը վճարել ազգանուիրին: Ամենէն կարճ ճամբան աս է: Թող հիմնցած ու փրտած ձեւերուն յաջորդեն նոր և օգտակար կարգադրութիւններ:

Տիգրան Սահակեան

ՁԵՅԹՈՒՆԻ ՀԱՍԱՐ

Ամսոյ 27ին, կիրակի օր, տեղաբնակ երկու հայ պատանիներ՝ փոքրիկ տետրակ մը ձեռքերին և իրենց հայրենիքին օգտակար ըլլալու տենչը սրտեր:

նուն՝ առանց երկար բարակ մը տածելու՝ գիմեցին ուղղակի տեղւոյ թաղական խորհուրդին մոզովարանը:

—Մենք երկուքնիս կուղենք Ձէյթունի համար հանգանակութիւն կատարել. կը հաճի՞ք արտօնութիւն տալ մեզ:

Ու թաղական խորհուրդը կենթադրեմ թէ հիանալով այս տղաներուն եռանդին վրայ—պզտիկ խորհադակցութեանէ յընտքը ստորագրեց ու կնքեց անոնց ներկայացուցած սետրը և արտօնեց իրենց Ձէյթունի տառապեալ հայերուն ի նպաստ հանգանակութիւն մը կատարել, սակայն միմիայն իրենց «շրջանակին» մէջ:

Մենք կարճատեղաբար հոս այս էրողութիւնը հրճուանքի և վշտի խառն զգացումով մը:

Ձէյթունի կտրիճներուն հոգեւորտր մանուկները հիւանդ են ու բժիշկ չունին, վարժարան պիտի երթան՝ ուսուցիչ չունին, ժողովուրդը վերջին աստիճանի աղքատութեան մտանուած՝ ուտելու հաց չունի, հագուստ չունի: Բոլոր ասոնք կը գրուին, կը յայտնուին Վառնայի հայ շաւարակութեան և անոր մէջէն միայն երկու հայ պատանիներ կը գտնուին, որոնք լրջօրէն նըկատի կառնեն իրերու կացութիւնը և կորոշեն ու կը ձեռնարկեն հանգանակութեան, գործնականապէս արտայայտելով այսպէս իրենց հիացումն ու յարգանքը գէպի Ազգային Մարտիկները:

Իսկ անդին անոնք, որ իսկապէս պարտաւոր էին աւելի խորունկ կերպով զգալու մէկը իրենց ազգային պարտաճանաչութիւններուն մեծագոյններէն, որոնք որ իսկապէս ի վիճակի էին աւելի ուրդիւնաւոր կերպիւ օգնելու կարօտ Ձէյթունցիներուն, անոնք կը մնան տնգործ:

Մեզ համար սակայն կայ միութարակ կէտ մը՝ պատմութեան կան խորհուրդին կողմէն հայ պատանիներուն տրուած արտօնագրին մէջ: Պատանիներուն

Ահա առիկ նուիրատուներուն
ցուցակը: Տիարք Ե. Քիւրքեան
10 Ֆր. — Ոմն Տ. 10 Ֆր. — Ո.
Նալաճիեան 10 Ֆր. — Ոմն Թ. 5
Ֆր. — Եղբ. Աստարճեան 5 Ֆր.
— Եղբ. Փ. 4 Ֆր. — Պ. Տէլալեան
4 Ֆր. — Ոմն Օր. 2 Ֆր. — Ոմն
Աշ. 2 Ֆր. — Ոմն Պոյ. 2 Ֆր. —
Ոմն Խ. 1 Ֆր. — Ճամբորդէ մը 1
Ֆր. — Ոմն Տու. 5 Ֆր. 90 անթ. —
գումար 60 Ֆր. ոսկի բրամ: Այս
հանգանակուած գումարը անմիջա-
պէս զրկուեցաւ միջրիկեան Տրի-
պոլիս (Ղարպ—Քարապուզ) ալ-
գասէր և պատուաւոր հայու մը
որ շատով հասցնէ իր տեղը:
Քաղցր է մեզ յուսալ թէ այդ
պարկեշտ հայլ պիտի հաճի երկ-
տողով մը անարժուածի միջոցաւ հա-
ղորդել մեզ թէ՛ այդ գրառն ըս-
տանալը և թէ՛ իր տեղը հասցը-
նելը, որուն համար կանխաւ մեր
շնորհակալութիւնները:

Նշան

Պետկոյ, 24 ապրիլ 1903

Խմբագիր

Հանձնէք ձեր յառաջիկայ թը-
ւոյն մէջ՝ մեր հրատարակեալ
«Իրաւունք» 30 թիւին մէջ
կարգադրեալ Մշտնի Միջոցով, Չօք-
Մարզուանի այն յայտնի և անձ-
նուէր կուտոյին եղեռնական յոշո-
տումը... Հնչակ—Արղումանեան—
Սաղունի կեդրոնի հրահանգին
համաձայն՝ նոյն հնչակեաններու
գաղտնիութիւնը:
Մենք ստորագրող ազգային-
ներս հրապարակաւ կը խնդրենք
այն ամէն ազգային անհատներէ,

որոնք Միջոցի սպանութեան պա-
րագաներուն և շարժառիթին որ
և է միջոցաւ պիտակ եղած են,
յանուն արդարութեան և մարդ-
կութեան հրապարակեան գիտցած
նրն. մանաւանդ յանուն ազգա-
յին գոյութեան սուրբ գաւառի,
որուն համար Միջոց այնչափ անձ-
նուէր կուտած և կեանքը նուրի
բաժ էր...
Անհամբեր կոպտեանք այս հրե-
շային դէպքը լուսարանող որ և
է յայտնութեան:

Օրինակ մըն ալ «Իրաւունք» ին խ-
կած ենք
80 ստորագրութիւններ:

Ղ Ա Ր Ի Բ

ՊՈՒՆԵՍԱՐ ԸՆԹԵՐՈՆՈՂԻՆ ԱՌՁԵՒ

(Շա՛ն ախորձ քիւնն ևւ վերջ)

Այս սպանութեան մէջ բանաս-
տեղծը կը գրգռուի ու հայկական ա-
լիկոն կեանքի մոնչող այեքներէն կը
մղււի. արագութեամբ կը խորա-
սուզուի անոր ալիքներուն մէջ ժողո-
վրդին զգացու երբ խորէն պրպտե-
լով ու կը յայտնի ճշտութեամբ ըմ-
բոնել թէ՛ ազգային զարգացման ըը-
նորոշ վարկեանները թէ՛ ընկերա-
կան պայքարներու տխար ու էա
կան արտայայտութիւնները:

Ղարբերին «պատկերները» վստմ ևս
են. որովհետեւ ժողովրդական հոգիին
խանդավառ աստուածացումն են:
Անս թէ ինչպէս Ղարբը կը մըռնէ
իր պաշտօնը իբր բանաստեղծ «Ուս-
տաւորը» պատկերին մէջ:

«Եւ լուր դիշեւայ այս տխուր ժա-
սին, երբ մեռելները մեզմ փսփոսմ
են և պատմում իրար իրենց վիշտ ու
ցաւ, կըր մոռացութեան, ապերախ-

տութեան խորունկ կսկիծը ցաւի երգ
չինած ողբ են միմիջում շիրիմների
տակ. — գլուխս դրած հողի թըմ-
բերին՝ ես ալանը կ'անեմ նրանց զը-
րոյցին, անդիր կուտանիմ նրանց շը-
շուկներ և սրտի վրայ բոցեղէն տա-
ռով ես կը դրօշմեմ մահու աշխարհից
հնչող ձայները, ես կը հառաչեմ նը-
ր նց հառաչով, ես կը կսկիծամ նրանց
ցաւերով, ես լաց կը լինիմ նրանց
արցունքով, ապա անզգայ, քայտիրտ
աշխարհին ցաւը կը պատմեմ նահա-
տակներին...»

Աղատութեան Ոգիւնն կցած ենք
ժանտութիւններ այս նկատումով որ
հեղինակը այս պատկերին մէջ, որ
ուրիշ բան չը ներկայացներ, այլ
հիւանալի ու ֆանդաստիքական քեր-
թուած մը, հրաշալի ու բանաստեղ-
ծական քրոնիկոն այն արիւնտ եղե-
լութիւններու, որոնք կը գրաւեն
1891—1901ի յիշատակելի շրջանը. —
չօշափելով այն «մտայլ» դէպքերը
պատմութեան մէջ, որոնց դժոխային
բոցը պայծառօրէն կը լուսաւորէ դի-
ւանագիտական էն թագու ու քօ-
ղարկուած ինդրիքներն ու մեքենա-
յութիւնները. այն շարագուշակ օր-
կանիքական ցնցումները, հայաստա-
նի ընկերական կազմակերպութեան
հրաբլխային այն սարսուռները, ու
որոնք անյազաբար լափեցին կէս մի-
լիոնի չափ ժողովուրդ մը, որոնք
քրիստոնէական բարեպաշտութեան ա-
նարգ դիմակը վար առին քրիստո-
նէական բոցը տխարասոր պաշտ-
պաններու երեսէն, նա մանաւանդ
պաշտօնական Ռուսիոյ, որուն օգար-
չելի ու ախական վայրենի դէմքը ե-
րուան եկաւ իր ամբողջ իբր մերկու-
թեամբ հրգեհուած հայ գիւղերու ու
քաղաքներու դժոխային բոցերուն
հանդէպ. չօշափելով այն ցնցումները
կըսեմ, որոնք ապացուցին քարիդա-
լիսական անսիրտ աշխարհին, թէ
հայ ազգը — ախական այս պօէրնե-
րը — չպիտի հանդարտի մինչեւ որ
չստանայ, թող ծով արիւնով ըլլայ:

րանց...
— Իրանց, գիւղացիների բրքիլ-
ներն են, տես, նրանք արձամար-
հում են ինձ, հալածում, նզովում,
տե՛ս, սրանք էլ, այս պատերն էլ,
այս վերաբերումն էլ, ամենքը կշտամ-
բանքով և ասկըթեամբ են նայում
ինձ, երես դարձնում ինձնից... Ես
անարգ, ստոր արարած եմ...
— Բայց ինչո՞ւ, Յակօ ջան, ասա՛,
ասա՛...
— Ինչո՞ւ, դեռ հարցնում ես, ես
եմ վազգէնի մատնողը, էն կտրիչ
մարդի, էն...
— Ախ, ճշաց Նաբաթը, պղծեց
իմ մարդը օճախը, մատնիչ անուր
ստացաւ: Ահա թէ ինչի վրայ էր
ակնարկում Նալուս, վայելեց, նա
պատճ, սեւ հագիր, շիւան արա, հող
ցանկը զլլիկ... նա թուրացած վար
րնկաւ, գլուխը առաւ երկու ձեռնե-
րի մէջ և սկսեց հնկեկալ:
Ոչ իր պէ՛ Յակօն այնպէս խորը
չէր զգացել իր յանցանքի ծանրու-
թեան որ իր պէ՛ անպակ շերտան-
ջիլ իր խիզճը, ինչպէս այս րուպէին
նա մտակաւ կնոջը, բանց թեւից
և ուժգնութեամբ ցնցեց:
— Այնպէս լաւ է՛ զո՛ւ էլ ծիծաղիր
վրաս, երես դարձիր, դէ շուտ,
այ պէս ծիծաղիր որ սիրտս ծակի,
ուղեկա շալթի, շուտ... այ այդպէս...
Ոչ՛, ասուած իմ, ես ցնորուած եմ,

իր աղատութիւնը, որ կարելիութիւն
պիտի տայ անոր սրբութեաց քալել
տնտեսական ու կուլտուրական զար-
գացման գահավէժ ուղիին վրայ վերջ-
նականապէս ազատուելու համար գե-
րութեան էն յետին ձեւէն՝ տնտեսա-
կան այն ցնցումները, որոնք հաս-
տատեցին թէ հոն, Հայաստանի մէջ,
ուրս վերջին խորանը քիչ ատենէն
պիտի սրբապղծուի, կոյսերը պիտի
զրկուին իրենց կուտական գոյնէն և
վերջին սովամահ մայրը գոսացած
ձեռքերով պիտի ընդգրկէ վերջին
մարթուած երեխան իր պաղած կըրծ-
քին վրայ»... Ի՞նչ հոն — արեւի ծնն-
գավայրին մէջ — կապրի կենդանի,
հզօր ու կարող ազգ մը, եւ թէ ոչ
սք վիճակի մէջ է գայն ջնջել աշ-
խարհի պատմութեան երեսէն, որով-
հետեւ անիկայ էն արտադրիչ ազգն է
արեւելքի մէջ... չօշափելով, կըսեմ,
բոլոր այս եղելութիւններն ու դէպ-
քերը, հեղինակը կը ցուցնէ յեղա-
փոխական շարժման երեսելի թելագ-
րիչները, ի տես կը հանէ պատմական
անդիտակից զարգացման գիտակից
արտայայտիչներն. կը խօսի կարեւոր
րոպէներու մասին, երբոր ժայթքած
է ժողովրդին գայրոյթը, կը նկարագրէ
այն նշանակելի կէտերը, ուր տեղի
ունեցաւ դժոխ և կոխը, կը խօսի
գերուած ու հարստահարուած ազգի
ուժի, յոյսերուն ու փառանքի մա-
սին, — այս ամենքը, որոնք վրայ
պուկար ընթերցողը քիչ գաղափար
ունի, չըսելու համար բնաւ:

Այս հեղինակը կը խօսի հայ ժո-
ղովուրդին գործութեան, բարեկեցու-
թեան, իր ձեռքով մասին...

«Բայց աւա՛ղ, պիտի վերջացնենք
մեր ընկերին, Տըթ. Ք. Ռաքովսքիի
խօսքերով, ոչ մէկ բան պիտի վերա-
դարձնէ հայ ազգին ոչ անոր առաջին
ուժը, ոչ անոր յոյսերուն ու փառա-
նքերուն ամբողջութիւնը, Հայաստան
թշուառ ու անբախտ Հայաստան,
միթէ յաւիտեան դատապարտուած ես՝
գերութեան, քաղցի ու անարգանքի

մնաց միայն մի քանի քայլ: Այդ
մարդիկ հիւս գլուխ կը խոնարհեն,
խորը բարեւ կտան ինձ, եւ ինչպէս
կարող են շտալ, մտածում է Յակօն:
Նա քայլերը արագացրեց, մտեցաւ,
գլուխը թեքեց դէպի գիւղացիները,
նայեց ուղիղ նրանց վրայ, պատ-
րաստուած էր իր աղայական բարեւը
տալ... Եւ յանկարծ ի՛նչ տեսաւ...
Լուս էին ամենքը եւ անշարժ. ոչ
սք շարսեւեց, Այժմ միայն նկատեց
Յակօն այդ ժպիտների դառնութիւնը
եւ նրանց օրքան խայթող լինելը,
տեսաւ, ճաշակեց այդ, եւ յանկարծ
բոլոր գիւղացիների այդ ժպիտներից
բարձրացաւ մի ընդհանուր քրթիլ,
ասես նախամտածուած էր այդ, դառն
հատանքը մախտնեցին այդ քր-
թիլների հետ եւ գնացին, թափան-
ձեցին Յակօի միջեւ ոսկրները:
Նա ցնցեց ամբողջ մա՛մնով. սարս-
ուաց, սպրդեց, կորցրեց իրեն, մո-
ռացաւ ամեն ինչ, եւ վերաբերու-
եւ իր քայլուածքը. նա շարած կա գ
նից ոչինչ չհասկանալով այդ բոլո-
րից:

— Թո՛ւ, քո աննամուս երեսին,
կանչեց մի գիւղացի:
— Թո՛ւ, էդ արիւնտ վերաբերու-
մբայ, կանչեց երկրորդը:
— Ստոր, անարգ հայ, գնա՛ գնա՛
խեղդիր քեզ Յուզայի նման, այդ
միայն քեզ պատիւ կը բերի, կը վե-

րացնի ամօթը մեր գիւղից գնա, գը-
նա... գուաց ծերունի Սեփօնը:

Հարեւաբար կողմից օկսեցին թը-
քել, մրել, անիծել նրան. Անշարժ
էր նա ամբողջ ժամանակ. յանկարծ
ուշքի եկաւ, հասկացաւ, կամրեց,
ծածկեց երեսը ձեռննրով, մի սար-
սափելի ձայն արձակեց, յետ դար-
ձաւ եւ փախաւ:

Ընդհանուրի քրթիլը ճանապարհեց
նրան:

Յակօն փախաւ, իրեն գցեց տունը,
զուտ ամուր փակեց. ինկոյն հանեց
վերաբերում. գէն չպրտեց, ֆէսը
խփեց գետնին, արտրեց ոտներով,
վերցրեց կնոջ գէյրսն, կտոր, կտոր
արեց...
— Ինչեւ տնում, ինչ այ մարդ,
ինչ է պատահել քեզ ճշաց աղայ-
ուած Նաբաթը, այո՛, նա գժեւ է...
— Թող որ պատուեմ, օրանք մերը
չին, սրանք արիւնտ են:
— Ախ, նո՛ւ չեմ հա կանուած...
— Այո՛, ի՞նչ քո վազգէնի արիւնով
նիկե՛ ծ. ր. գոյում է նրա արիւնը,
նա ասուած իմ աս ինչ է, ար-
իւն է կաթում, տե՛ս, կնիկ, այս
չորերը արիւնով են շաղախուած, դու
էլ տեսնո՞ւմ ես, լաւ նայիր: Այս
ինչ ձայներ են, ինչ հառաչներ,
լսում ես. նրանց քրթիլներն են...
— Թո՛ւ... այս տեղ ոչ ոք չկայ, ոչ
միայն ձայն չի լսում... բայց դու մի

ինչ անեմ, ինչ, այստեղ ամեն ինչ
տանջում են ինձ...

— Գնա՛, գնա՛, ուր կուգես, ում
մօտ պէտք է, օջախս վրայից այդ
ամօթը, այդ արատը մաքրիր, գնա,
գնա՛, շուտ...
— Գնամ, փախչիմ. բայց տես,
էս նզոված վերաբերում, լաւ տես,
նրա ամեն մի պատուածքը մի մի րե-
րան են դառեր եւ ծիծաղում են վը-
րաս, լաւ նայիր, այդ բերանները
արիւնտ են, դու էլ տեսնո՞ւմ ես,
այ կնիկ, լաւ նայիր է՛ րոպրի
պատճառը սա է, այս արիւնտ վե-
րաբերում. տուր ինձ, բայց նա շարժ
ւած է տես, տոաջ է գայիս. դու
վերցրու կնիկ, դո քիթը թոնիրը,
թող վառուի մոխիր դառնայ գլ՛,
շուտ...
— Փախիր քեզ ասում եմ, սեւ
անարգ մարդ, գնա մեղքդ սրբիր,
այդ ասում է քո օճախը, շոտ գնա
գնա՛...
— Ո՛ւ, դու էլ ես հայածու՞մ մ
օճախը, այո՛, փախչում եմ... այս-
տեղ ամեն մի առարկայ իրանից ան
ու դարգանդ է սփռում, ես գողում
սարսփում եմ...
Ե. նա փախաւ

Ե. Ֆրանկլանց
(Շարունակելի)

Ե. Ֆրանկլանց
(Շարունակելի)

Ե. Ֆրանկլանց
(Շարունակելի)

Ե. Ֆրանկլանց
(Շարունակելի)

չղթաները կրելու Ո՛չ, քու ազգիդ զոհերով պարարտացած հողէն, անոր արցունքներով ու արիւնով ոտոզուած երկրէն պիտի բուսնի ազատութեան ճիւղաւոր ծառը, որուն փրկարար հովանիին տակ ազատան պիտի գրտնեն բոլոր արեւելեան ազգերը: Ա՛յո՛, ա՛յո՛, մենք ալ երախտապարտ ենք քեզի, ազնիւ ազգ, քու բարեկեցութիւնդ հալեցնող բոցերը, քու զաւակներդ խեղդամահ ընող արեան դեակերը պիտի սրբեն արեւելքի մէջ Ռուս ազգեցութեան վերջին հեռաքերն ալ: Բու նահատակներդ լուղարկաւորող զանգակներուն նշխունը նշանն էր մեր զարթման էն անմիտ ու միեւնոյն ատենէն սղբալի ստակացումէն՝ պատմական զանազան «ազատարար» դէպքերու, որոնց նշանակութիւնը սխալ կը մէկնէինք»:

Թորգմանեց
Գառնիկ Գեորգեան

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

—Վերջերս Մալազկերտի մէջ պատահած երկրաշարժի մասին Պոլսոյ պատրիարքարանը հասած հեռագիրը մը տեղեկագրեր է թէ Մատնայ վանքը չափազանց վնասուած է:

—Անցեալ շաբթու Պոլսոյ պատրիարքը կրօնական ժողովին առջեւ կարդացեր է այն տեղեկագրերը, որ ուղղուած է կաթողիկոսին Մուշի լքուած հայ կիներուն համար:

—Կաթողիկոսէն շնորհուած աւանակուող լանջախաչերուն համար երախտագիտական ուղերձներ զրկած են էջմիածին՝ Պանտրմայի առաջնորդական տեղապահը, Բարթուղ Մ. վարդապետ Գուրեան, Դեօթահայի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Թաւադեան և Տրապիզոնի առաջնորդ Տ. Եղնիկ վարդապետ Քալբաքեան:

—Պոլսոյ հայ հոռմէականներէն Օր. Երանիկ Կէօչէհան մեռնելով կտակ մը թողած է որտակաւին փակ կը մնայ եղեր: Հանգուցեալը տէր է եղեր 40—50000 ոսկիի հարստութեան մը և իր կտակէն միայն ուս յայտնի է թէ 2000 ոսկի թողած է հայ հոռմէականներու Ս. Յակոբ Անկեղանոցին, պայմանաւ որ, այդ գումարին մէկ մասով նորոգուի անկեղանոցին մատուռը և միւս մասով ձրիաբար աղքատ հիւանդներ դարմանուին հոն, իսկ ինքը թաղուի նոյն մատուռը:

—Պէյքոզի յոյն աղջիկ մը տեղւոյն հայոց Փոփանորդարանը գիմնով փափաք յայտնել է Հայ Առաքելական եկեղեցիին ծոցը դառնալ: Փոփանորդարանը պիտի կատարէ եղեր հարկ եղած օրինական ձեւակերպութիւնները:

—Պոլսոյ պատրիարքը հեռագրով շնորհաւորէր է Կիլիկիոյ

նորընտիր Կաթողիկոսին Օծուժը: —Այն թմայի քահանանքէն մէկը ապօրինի պոսակ մը կը կատարէ, որուն շուրջը հնազանդիլ աղջիկը ու նոյն իսկ (ո՛չ) կը պոռայ՝ չուզելով պատկուել այդ տղուն հետ: Յիսոր քահանան շրջարցներ պատճառը ու կը պնդէ որ աղջիկը համեստօրէն պէտք է հնազանդի: Պատկարարութիւնը կը կատարուի, բայց աղջիկը մէկ երկու օր ետքը առիթը գտնաւով կը փախչի իր փեսային տունէն և հիմայ օրիշ աղու մը հետ պոռակուած է աղքէն:

—Պ. Մանթաշօֆ յանձն առած է եղեր Թիֆլիզի բազմաուեստեան վարժարանի հաստատութեան ծախքը հողալ, Կենթադրոյի թէ այս հաստատութեան համար պէտք պիտի ըլլայ 100,000 ոսկիի գումար մը:

ՏԵՂԷԿԱՆ

Անցեալ տարի կողկասի հայ գաղթականներուն օգնելու նպատակով Վառնայ Հոգատար Յանձնախումբը մը կազմուած էր: Յանձնախումբին այդ նպատակով սարքած ներկայացումէն և կատարած հանգանակութենէն զույսացած 1020 ֆր. ի գումարը վերջերս կողկաս խրկուած, բայց կրկին հոս վերադառնուած է ներկատելով որ առ այժմ գաղթականները ցրուած վիճակի մը մէջ կը գտնուին և կարելի չէ զիրենք հայրենիք վերադարձնել: Կիմանանք թէ այս գումարը հիմա տրուած է Պուլկարական Ալգային Դրամատունը:

Յայտնի է թէ այս պահուս Զէյթունի կարծ ժողովուրդը մեծ պէտք ունի արտասահմանի օգնութեան և քանի որ Հայաստանցի ժողովրդին օգնելու համար հաւագուած պատրաստ գումար մը կայ հիմա արդեօք իր նպատակին գործածուած ըլլա՞ր անիկայ եթէ Վառնայի մէջ Զէյթունի համար հանգանակութիւնք գումարին վրայ աւելցնելով ամբողջը մէկէն խրկուի պոլսոյ աղքային պատրիարքարանը — կամ ուրիշ ուէ ապահով միջոցով մը — Զէյթուն հասնելու համար: Պատ. Հոգատար Յանձնախումբին ուշադրութիւնը կը հրաւիրենք սար վրայ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Ինքը կառավարութիւնը էտիրենէն ալ հսկողութեան տակ առած է. պուլկար բնակարանները մանաւանդ ուսուցիչներու տունները վերջին ծայր կը հրկուին ոստիկանութեան կողմէ:

կամորջները և ճամբաները զինտրներով լեցուցն են, շրջող զբոյցին նայելով թուրքերը չարգմը պիտի պատրաստեն եղեր ամբողջ պուլկարներուն համար:

—Սէրի մէջ կառավարութիւնը կոթեր է պուլկար գիմնադրեանը տինամիթ և հրացան փնտախու համար, երբ բան մը չէ գտեր գոցեր է վարժարանը և աշակերտները իրենց տունները ու գիւղերը ցրուէր է. ուսուցիչներէն մէկ քանին արձակելու միտները ձերբակալէր է. շրջականներէն քաղաք հասնող բոլոր պուլկարները ձերբակալուած են:

—Կորնիա — Պրոտի գիւղը զինտրներ մտնելով գիւղապետին կը հրամայեն որպէսզի գիւղացիներէն հրացանները հաւագէ ու իրենց յանձնէ, հակառակ պարագային կապուան ամբողջ գիւղը ոչնչացնել և ձեր թէ մանուկ թրէ անցնել եթէ նոյն իսկ հրացանի պայծիւն մը միայն լսուի:

—Սելանիկէն հասած նամակ մը կը հարողէ թէ հոն զինտրական ատեանը սկսած է իր նիստերը ձերբակալուած յեղափոխականները դատելու համար, ձերբակալութիւնները միշտ կը շարունակուին, անանկ որ պուլկարները մինչեւ իսկ փողոցներու մէջ պտտելու կը վախնան որովհետեւ կեանքերնին միշտ վտանգի տակ է:

Պուլկարները ամենէն աւելի վրնասուած տեղական յոյներէն և հրէաներէն, յոյները կը պարծենան եղեր թէ պուլկարներուն ոչնչանալովը իրենք պիտի ազատուին իրենց ամենէն մեծ հակառակորդներէն իսկ հրէաներն ալ անով որ իրենց դէմ վաճառականական մրցակիցնեի պիտի պակսին:

—Սիլանիկիմօտ (Քարաֆէրիայի) քովերը մակեդոնացի հերոսախումբի ընդհարում մը տեղի ունեցած է. հրոսպետը (Թոնչէֆ) սպաննուել է:

—Բօշթան կը հերքէ եւրոպական մամուլին Սէր գիւղին մէջ Յէլլէֆին սպանման լուրը:

—Բ. Դուռը լուր ստացած է թէ պարսկական սահմանազխէն Հայաստան մտած են քանի մը հայկական հրոսախումբեր Պայազի աի և Սասնոյ կողմերը. կառավարութիւնը պէտք եղած միջոցները ձեռք առած է յեղափոխականներու հանդէպ:

—Թուրքերը Կորնօ վրայ թանի գիւղացիներէն պահանջել են, որպէսզի հրացաններ յանձնեն իրենց. գիւղացիները կրակով պատասխանել են թուրքերուն. այս պատճառով մեծ կռիւ մը ըսկսել է իրենց մէջ. գիւղացիները քաջութեամբ կռուել են, և երբ կռիւը այն սասիճանին

հասեր է որ գիւղացիները պիտի յաղթուին, իրենց օգնութեան հասեր են մօտակայ գիւղերէն ուրիշ Մակեդոնացիներ, այնպէս որ թուրքերը երկու կրակի մէջ մնացել են և ահագին կորուստներ տալով ստիպուել են Սէրի կողմը քաշուիլ:

Հաւաստի ենք թէ հրդեհէ կողոպուտ է ջարդէ ազատուած գիւղը շուտով պիտի քաւէ իւր մեղքը:

—Սելանիկի վային յայտներ է որ եթէ յեղափոխականները սիրտ առնեն հասնող եւրոպական զրահաւորներէն ու խռովութիւնը կրկնուելուն պատճառ դառնան ինք պատասխանատու պիտի ըլլայ թուրքերուն աւարտութեանց հանդէպ:

—Սելանիկի մէջ վերջին դէպքերու տեսն ձերբակալուած պուլկարներէն 13 հոգի դատապարտուած են, զինտրական տեսանին կողմէն, հրացանի բռնուելու, որոնց մէջ հատ մը չիկայ որ պէպքերուն մէջ մասնակցութիւն ունեցած ըլլայ:

ՊՈՒԿԱՐԻՍ

Բարիզէն առնուած հեռագիր մը կը հարողէ թէ Իշխանը հաւաստի է դիւանագիտական շրջանակները որ իր ոչ թէ գահը, այլ անձն ալ միշտ վրտանգի տակ պիտի ըլլայ՝ եթէ աւելի առաջ երթայ ապստամբական շարժումներուն հետապնդելու մէջ և զօրութիւն բանցնէ, իր հպատակներուն հանդէպ:

ԶԵՅԻՒՆԻ ՀԱՄԱՐ

Վառնայի աղքայիներէն Պ. Յարութիւն Խաչիկեան 10 ֆր. նուիրած է Զէյթունի համար:

Ն՝ՄԱԿԱՏՈՒՓ

Դուռեժ. — Պ. Տօֆր. Փաշախան սակէ առաջ կորսուած նամակի մասին ձեր պրած երկրորդ (10/23) ապրիլ թուականին ստացանք:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ